

Զարգացման մարտահրավերին դիմակայելու համար Հայաստանին անհրաժեշտ է ավելի հզոր և ֆինանսապես կայուն Համաշխարհային բանկ

Մյուս զարգացող երկրների պես, Հայաստանը պայքարում է համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հարուցած տնտեսական անկման ալիքի դեմ: Թեև մենք չեինք ճգնաժամի հեղինակը, այդուհանդերձ մեր տնտեսության մեջ ևս անկում արձանագրվեց առևտրաշրջանառության, ուղղակի արտաքին ներդրումների և դրամական փոխանցումների ոլորտում: Մեր շրջահայաց քաղաքականության շնորհիվ, Հայաստանի տնտեսությունը ճգնաժամի փուլ թևակոխեց՝ ուենալով որոշակի առավելություններ. բավականաչափ կապիտալ և իրացվելի միջոցներ ունեցող և ամբողջովին վերահսկելի բանկային համակարգ: Առանց այս առավելությունների՝ մեր տնտեսությունն ավելի շատ կտուժեր ճգնաժամից՝ վտանգելով չքավորության հաղթահարման ոլորտում արձանագրված ձեռքբերումները:

Մեր արձագանքը ճգնաժամին արագ էր և կտրուկ: Մենք կարողացանք ֆինանսական միջոցներ ներգրավել մեր զարգացման գործընկերներից՝ Համաշխարհային բանկից, Արժույթի միջազգային հիմնադրամից, Ռուսաստանից, Եվրամիությունից, Զարգացման ասիական բանկից՝ համաշխարհային տնտեսական ցունամիի պայմաններում մեր դիրքերն ամրացնելու համար: Այդ միջոցներն օգտագործվում են աղքատներին և հասարակության առավել խոցելի խավերին պաշտպանելու նպատակով ընդունված սոցիալական հանձնառությունների և կրթական ու առողջապահական ծախսերի ապահովման համար: Գումարներ հատկացվեցին նաև մանր ու միջին գործարարության զարգացման, հատկապես՝ գյուղական վայրերում այնքան անհրաժեշտ ենթակառուցվածքների կառուցման համար: Գյուղական ճանապարհների, կացարանների, ոռոգման համակարգերի և այլ փոքրամասշտաբ ենթակառուցվածքների մեջ իրականացված այս ներդրումները միտված են ազգաբնակչության կենսապայմանների բարելավմանն ու զբաղվածության ապահովմանը: Ինչպես որ պահանջվում է նման իրավիճակներում, լողացող փոխարժեքի ներդրմամբ մենք բարելավեցինք հայրենական ընկերությունների մրցունակությունը: Կարևոր է, որ չնայած ճգնաժամի սաստկությանը, ի տարբերություն այլ երկրների, մենք չգայթակղվեցինք մեր տնտեսվարողներին պաշտպանելու գաղափարով, շարունակեցինք իրականացնել ազատ տնտեսական քաղաքականություն և այժմ էլ հաստատակամորեն առաջ ենք ընթանում տնտեսության մրցունակության բարձրացման ուղիով:

Մեր ռազմավարական նպատակն է Հայաստանը դարձնել ներդրումների համար գրավիչ հանգրվան: Բաց շուկաներ ունեցող մրցունակ Հայաստանը կկարողանա լավագույնս օգտագործել սփյուռքի մեծ ներուժը և յուրաքանչյուր անհատի կարողությունները: Մեր տնտեսությունն էապես կթոթափի առանձին ոլորտներից, մասնավորապես՝ հանքարդյունաբերությունից և շինարարությունից իր կախվածությունը և ձեռք կբերի ցնցումների նկատմամբ առավել մեծ դիմադրողականություն: Այսպիսով, առավել շահեկան դիրքերից մենք կկարողանանք առավելագույնս օգտվել հետճգնաժամային շրջանից՝ նախադրյալներ ստեղծելով առաջիկա տարիներին արագ և կայուն աճ ապահովելու համար:

Իմ նպատակն է Հայաստանը տեսնել միջին և բարձր եկամուտ ունեցող երկրների շարքում, ինչպես նաև մինչև 2021 թվականը կտրուկ առաջընթաց արձանագրել աղքատության դեմ պայքարում: Համաշխարհային բանկը մեզ համար միշտ եղել է հուսալի և վստահելի գործընկեր՝ բազմադիմի և մրցունակ տնտեսության կառուցման ջանքերում: Սակայն արտաքին շուկաների դժվարամատչելիությունը, տարանցիկ փոխադրումների բարձր սակագներն ու արտադրական սուղ բազան մեր տնտեսությունը դարձնում են առավել խոցելի՝ խոչընդոտելով տնտեսության բազմազանեցման գործընթացին: Մրցունակության բարձրացմանն ուղղված ներդրումները համապատասխան ֆիսկալ տարածք են պահանջում, որը մենք ձգտում ենք ստեղծել բարելավված հարկային քաղաքականության շնորհիվ: Սակայն Համաշխարհային բանկը ևս կարող է օգտակար լինել՝ հավելյալ միջոցներ հատկացնելով կոնցեսիոն վարկավորման իր լծակի՝ Միջազգային զարգացման սանցիացիայի (ՄՁԱ) միջոցով: Հուսով եմք՝ ՄՁԱ-ի համալրման հաջորդ փուլում ևս (ՄՁԱ-16) Հայաստանը կմնա որպես կոնցեսիոն միջոցներին հասու երկիր: Մեր կատարողական վարկանիշը հաստատում է, որ Հայաստանը կարող է լավագույնս օգտագործել այդ միջոցներն ի նպաստ զարգացման և աղքատության կրճատման:

Այդուհանդերձ, ՄՁԱ-ի միջոցները սահմանափակ են և չեն բավարարի մեզ: Չնայած ճգնաժամին, մենք պետք է նաև ավելացնենք զարգացմանն ուղղված հանրային ներդրումների ծավալները նույնպիսի շրջահայացությամբ, ինչպիսին որ հանդես բերեցինք հարկաբյուջետային քաղաքականության մեջ: Այս առումով, Համաշխարհային բանկի կանոնավոր վարկավորման պատուհանը՝ ՎՋՄԲ-ը եզակի հնարավորություն է ընձեռում Հայաստանին: Մենք այդ պատուհանն օգտագործում ենք նոր գործընկերության ռազմավարության մեջ, սակայն համոզված ենք, որ բարձր կատարողական ցուցանիշները մեզ թույլ կտան ավելի շատ միջոցներ հատկացնել զարգացման նպատակներով:

Ես անչափ երջանիկ եմ՝ որ Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի վերջերս կայացած ամենամյա հավաքի ժամանակ Ջարգացման հանձնախումբը խոտստացավ Համաշխարհային բանկի խմբին ապահովել համապատասխան միջոցներով, որպեսզի վերջինս կարողանա օգնել անդամ պետություններին՝ դիմագրավելու զարգացման հետ կապված մարտահրավերները: Լիահույս եմ, որ Համաշխարհային բանկի խմբի ներուժը կավելանա 2010 թվականի զարնանն սպասվող բանկի ֆինանսական կարիքների վերանայման հավաքի ժամանակ: Ֆինանսապես կայուն և հզոր Համաշխարհային բանկը տնտեսության բազմազանեցման և ինքնահարատ զարգացմանն ուղղված մեր ջանքերի հաջողության գրավականն է:

Տիգրան Սարգսյան